«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Սարգսյան Սիրան

Հետազոտող ուսուցիչ՝ .....

անուն, ազգանուն

Ջանֆիդայի միջնակարգ դպրոց

.....

դպրոց

Գևորգյան Կարինե

Մենթոր ուսուցիչ_____

անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ- 2022

Բովանդակություն

Նախաբան …….. 3

Հետազոտական համատեքստ …….…... 4

Գործնական համատեքստ …….. .. 12

Ամփոփում …….…..... 15

Գրականություն ……... 16

Նախաբան

Ընտանիքում երեխան ստանում է կյանքի առաջին փորձը, կատարում է առաջին դիտարկումները և սովորում է իրեն պահել կյանքի տարբեր իրավիճակներում, իսկ յուրահատկությունը կայանում է նրանում, որ մի քանի մարդիկ ամենասերտ կերպով համագործակցում են երկար ժամանակով, որը ձգվում է տասնյակ տարիներ կամ մարդկային կյանք: Երբ ծնող-երեխա հարաբերությունները շաղախված են օտարման, փոխազդեցությունից խուսափելու ձգտումով, այն բացասաբար է ազդում երեխայի անձի, նրա հոգեկան աշխարհի ձևավորման վրա: Երեխայի հետազոտման, լավագույն որակների, հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթը ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին համատեղ ջանքերով դպրոցականների ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել: Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են փոխներգործության և համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է երեխայի ընտանիքի, ընտանեկան դաստիարակության յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ, համատեղ ուժերով դրանց լուծման ուղիները, ինչով էլ պայմանավորված հետազոտության մեր թեմայի արդիականությունը:

Գրականության ակնարկ

Ժամանակակից հասարակության մեջ դաստիարակության հիմնական ինստիտուտներից մեկն ընտանիքն է: Յուրաքանչյուր մարդու կյանքում ընտանիքը հատուկ տեղ է զբաղեցնում: Այն փորձը, որը նա ստանում է ընտանիքում, պահպանում է ողջ կյանքի ընթացքում, այնպես որ մեծանալով երեխաներն իրենց ընտանիքում կրկնում են ծնողների վարքը: Ընտանիքում է տեղի ունենում անձի նախնական սոցիալականացումը, յուրացվում են առաջին սոցիալական դերերը, սահմանվում են կյանքի հիմնական արժեքները, դիրքորոշումները, վարքագծային նորմերը, ձևավորվում երեխայի վերաբերմունքն իր և շրջապատի մարդկանց նկատմամբ: Ընտանիքը կարող է լինել անհատի զարգացման և էմոցիոնալ-հոգեբանական աջակցության աղբյուրը կամ դառնալ հոգեբանական վնասվածքների, անձի խանգարումների, հոգեսոմատիկ հիվանդությունների, նևրոզների, վարքի շեղումների աղբյուր: Ընտանիքի՝ որպես դաստիարակության ինստիտուտի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ երեխան ընտանիքում է անցկացնում իր կյանքի զգալի մասը, և անձի վրա իր ազդեցության տևողությամբ կրթության սոցիալական ինստիտուտներից ոչ մեկը չի կարող համեմատվել ընտանիքի հետ (Алексеева Л.С., Плотник М.М., Спиваковская А.С., Ширинский В.И. Влияние внутрисемейных отношений на формирование личности ребенка. – Вып. 1. – М.: ЦБКТИ Минсоцзащиты населения Российской Федерации, 1995. – 40 с.):

Ծնողների և երեխաների փոխհարաբերությունների խնդիրներով զբաղվել են ռուս հեղինակներ Ա. Գ.Կովալևը, Բ.Լևին, Վ.Լ.Տիտարենկոն, Ն.Կոնը, ինչպես նաև արտասահմանյան հոգեբաններ Յ.Կորչակը, Դ.Սպոկը, Կ.Ռոսը, Վ.Սատիրը, Ա.Դելա Տորեն: Ծնողների և երեխաների փոխհարաբերությունների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պարունակում ռուս դասականներ Ա.Ա.Բոդալևի, Լ.Ի.Բոժովիչի, Լ.Ս.Վիգոտսկու, Ա.Ս.Սպիվակովսկայայի, Ա.Յ.Վարգայի, Վ.Վ.Ստոլինի, Ա.Վ.Դոբրովիչի, Դ.Բ.Էլկոնինի աշխատությունները, որոնք արտացոլում են երեխայի հոգեբանական զարգացման, մանկության բնույթի և տարիքային շրջաբաժանումների ընդհանուր օրինաչափությունները:

Գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ երեխայի անձի կայացման գործում մեծ նշանակություն ունի ընտանեկան դաստիարակության ոճը: Ընտանեկան դաստիարակության ոճը երեխայի նկատմամբ ծնողների հարաբերությունների ձևն է, նրա վրա ազդեցության որոշակի մեթոդների և հնարների կիրառումը, որոնք արտահայտվում են երեխայի նկատմամբ վերաբերմունքի և նրա հետ խոսքային ու ոչ խոսքային փոխազդեցության յուրօրինակ ոճով (Добрович А. Б. Воспитателю о психологии и психогигиене общения. М.: Просве-щение. 1987 г. - 207 с.): Ընտանիքում ցանկացած աններդաշնակություն հանգեցնում է երեխայի անձի զարգացման բացասական հետևանքների, նրա վարքագծի խնդիրների: Կան ընտանեկան դաստիարակության ոճերի մի քանի տարբեր դասակարգումներ: Ավելի հաճախ ընդունվում է ամերիկացի հոգեբան Դիանա Բաումրինդի դասակարգումը՝ ժողովրդավարական, ավտորիտար, անտարբեր, լիբերալ (Кузьмишина Т.Л., Амелина Е.С., Пермякова А.А., Хохлова Е.А. Стили семейного воспитания: отечественная и зарубежная классификация / Т.Л.Кузьмишина. – М., 2014. – С. 16 - 25.): Հայրենական և արտասահմանյան հոգեբանության մեջ լայնորեն տարածված են այն աշխատանքները, որոնք նկարագրում են ընտանեկան դաստիարակության տիպերի, ոճերի բազմազանությունը: Այս առումով գրեթե անհնար է առանձացնել ընտանեկան դաստիարակության ոճերի միասնական մեկ դասակարգում:

Ավտորիտար (թելադրող) ոճ - ծնողները ճնշում են երեխայի նախաձեռնությունը, կայացնում նրա կյանքի կարևոր որոշումները, սահմանափակում ինքնուրույնութ-յունը, չեն հիմնավորում իրենց պահանջները, խիստ վերահսկում են, օգտագործում արգելքներ, նկատողություններ և ֆիզիկական պատիժներ, երեխայից պահանջում են ձեռքբերումներ, ներխուժում են անձնական տարածք: Ծնողների ավտորիտարիզմը դեռահասության տարիքում լուրջ խնդիրներ կառաջացնի (Антропов Ю.Ф. Психосоматические расстройства и патологические привычные действия у детей и подростков / Ю.Ф.Антропов, Ю.С.Шевченко. – М.: Издательство Института Психотерапии, Издательство НГМА, 2001. - 320 с.): Երեխաների արձագանքը կարող է տարբեր լինել: Ակտիվ և ուժեղ դեռահասները դիմադրում են ծնողների ճնշմանը, կոնֆլիկտներ ստեղծում, պաշտպանում իրենց դիրքորոշումը, ագրեսիվություն են

ցուցաբերում, սկսում ապստամբել, կարող են փախչել տնից: Մյուսները լսում են ծնողներին, զիջում են և ենթարկվում, միշտ և ամեն ինչում ապավինում են ծնողներին: Նման դաստիարակության դեպքում երեխայի մոտ դեռահասության տարիքի ընթացքում ձևավորվում է թշնամանք, ագրեսիվություն, հակամարտություն, իշխելու ձգտում, ատելություն ծնողների նկատմամբ, խնդիրների լուծում միայն ուժով, կոպիտ, բռի վարքագիծ և վերաբերմունք ուրիշների նկատմամբ, կամ անվճռականություն, նյարդայնություն, անինքնավստահություն, երկչոտություն, իրենց տեսակետը պաշտպանելու անկարողություն, ինքնագնահատականի անկում, սեփական արժանապատվության կորստի զգացողություն: Դեռահասները դժվարանում են ադապտացվել հասարակության մեջ և շրջապատող աշխարհում: Դպրոցում նրանք դժվարանում են ընկերներ գտնել, կապ հաստատել ուսուցիչների հետ: Երեխաների դաստիարակության ավտորիտար (թելադրող) ոճի դեպքում ձևավորվում են միայն արտաքին վերահսկողության մեխանիզմները, և երբ դրսից պատժի սպառնալիքը վերանում է, դեռահասի վարքագիծը կարող է դառնալ անկառավարելի, հակահասարակական: Դաստիարակության ավտորիտար ոճը զրկում է երեխային հոգեկան մտերմությունից, ջերմությունից, սիրուց, քնքշանքից, հոգատարությունից, կարեկցանքից, երեխաների և ծնողների միջև վստահությունից, ինչը հանգեցնում է կասկածամտության, մշտական զգոնության և շրջապատի, նույնիսկ հարազատների հանդեպ թշնամանքի:

Դաստիարակության **ժողովրդավարական** (վստահության վրա հիմնված) ոճ - իրենց երեխաներին այս ոճով դաստիարակող ծնողները խրախուսում են նրանց նախաձեռնությունը, անձնական պատասխանատվությունը և ինքնուրույնությունը (Педагогическая психология: учеб. для студ. высш. учеб. заведений / Под ред. Н.В. Клюевой. – М.: из-во ВЛАДОС-ПРЕСС, 2003. – 400 с.): Արդյունքում երեխան դաստիարակվում է որպես ինքնուրույն, ինք-նատիպ անձնավորություն: Այս ոճը բնութագրվում է երեխայի ջերմ հուզական ընդունման և մեծահասակների վերահսկողության բարձր մակարդակով: Ծնողներն արտահայտում են իրենց սերը, բարյացակամությունը երեխային, ծնողների և երեխաների միջև կա փոխըմբռնում, ջերմ զգացմունքներ, հաճախակի բարեկա-մական շփում: Ծնողներն ուշադիր են

իրենց երեխայի նկատմամբ, զգացմունքային առումով աջակցում են նրան, ստեղծում սիրո և հոգատարության ընտանեկան մթնոլորտ: Դեռահասներն ընդգրկված են ընտանեկան խնդիրների քննարկման մեջ, լսում և քննարկում են ծնողների կարծիքն ու խորհուրդները, մասնակցում իրենց վերաբերվող որոշումների կայացմանը: Ծնողները երեխաներից պահանջում են դրսևորել պատասխանատու, իմաստավորված վարքագիծ, կարգապահության կատարման մեջ ամրություն և հետևողականություն, որը ձևավորում է ճիշտ, պատասխանատու սոցիալական վարք: Դեռահասը զգում է իր կարևորությունն ընտանիքում: Այս վերաբերմունքը ձևավորում է դեռահասի կարգապահ, իր արարքների համար պատասխանատու, ակտիվ կյանքի դիրքորոշում, ինքնա-գնահատական, ինքնավստահություն, սեփական արժանապատվության զգացում, նախաձեռնողականություն և նպատակասլացություն, հետաքրքրասիրություն, աճում է անկախ, համարժեք ինքնագնահատական: Այդ պայմաններում դաստիարակված երեխաները կարող են վերահսկել իրենց վարքը, ցանկությունները, պահպանել կարգապահություն: Ձևավորվում է փոխզիջումային լուծումներ գտնելու, պայմա-նավորվելու, շրջապատի կարծիքի հետ հաշվի նստելու ունակություն: Նրանք լավ են սովորում դպրոցում, ավելի քիչ են ենթարկվում հասակակիցների բացասական ազդեցությանը, կարողանում են հարաբերություններ հաստատել և պահպանել մարդկանց հետ: Դպրոցում նման դեռահասներն ուսուցիչների հետ կոնֆլիկտներ չեն ունենում, քանի որ նա հասկանում է իր պարտականությունները և սովորում է կատարել դրանք: Դեռահասները գիտեն, որ ծնողները միշտ կլսեն և կօգնեն նրան: Ծնողները շփման մեջ օգտագործում են համոզելու, քննարկումների, փոխզիջման, փաստարկների մեթոդները: Նման ընտանիքում չկան ֆիզիկական պատիժներ և խոսքային ագրեսիա:

1. Դաստիարակության **լիբերալ** կամ թույլատրող ոճի դեպքում ծնողը երեխային «ազատություն», ինքնուրույնություն և անկաշկանդություն է տալիս, թույլ է տալիս նրան անել այն, ինչ նա ուզում է, ոչինչ չի սահմանափակում: Նա չի հասկանում «պետք է» բառը և ծնողների պահանջները չի լսում (Шнейдер Л.Б. Семейная психология: учебное пособие для вузов / Л.Б.Шнейдер - Изд. 2-е. М.: Академический Проспект; Екатеринбург: Деловая книга, 2006, - 768 с.): Ինքնահաստատման համար

երեխան օգտագործում է քմահաճույքները, պահանջները, ցուցադրաբար վիրավորվում է: Ծնողն ընտրում է չմիջամտելու մարտավարությունը, չի օգնում դեռահասին և չի խանգարում, մասնակցություն չի ունենում անձի կայացման գործընթացին: Հարաբերությունները սառն են, հեռավորության վրա, օտարացած, բացակայում է վստահությունը, հուզական կապը: Երեխայի հետ շփումը կառուցվում է ամենաթողության և ցածր կարգապահության սկզբունքի վրա, բնորոշ է երեխային ուղղորդելու անկարողությունը կամ դժկամությունը: Դեռահասության տարիներին նման երեխաները հաճախ կոնֆլիկտում են նրանց հետ, ովքեր իրենց պահանջներ են ներկայացնում: Դպրոցում խնդիրներ են ունենում հասակակիցների և ուսուցիչների հետ, քանի որ նրանք սովոր չեն կատարել մեծահասակների պահանջները, զիջել, հնազանդվել ավագներին, հետևել օրենքներին և կանոններին: Ինչի պատճառով երեխան մեծանում է եսասեր, կոնֆլիկտային, մշտապես դժգոհ է շրջապատից, ինչը թույլ չի տալիս նրան նորմալ հարաբերություններ կառուցել հասակակիցների հետ: Ի վիճակի չէ մտերմության և ջերմության, ցանկություն չունի հոգ տանել, օգնել, աջակցել ինչ որ մեկին: Դրսևորվում է կոպտություն և ամենաթողություն, գողություն, ստախոսություն, անկարգություն, անպատասխանատվություն, խոստումը պահելու անկարողություն: Ընտանիքի կողմից վերահսկողության բացակայությունը հանգեցնում է այն բանին, որ դեռահասն ընդգրկվում է հակասոցիալական խմբերում, քանի որ նրա մոտ չեն ձևավորվել հոգեբանական մեխանիզմները, որոնք անհրաժեշտ են հասարակության առաջ պատասխանատու վարքագծի համար: Ամենաթողության պայմաններում մեծացած դեռահասն ավելի է հակված հոգեբանական խնդիրների, ֆոբիաների, դեպրեսիաների: Նա չի սովորել վերահսկել իրեն և իր վարքագիծը, ի վիճակի չէ դիմակայել կյանքի մարտահրավերները Սեդրակյան Ս. Ընտանիքի հոգեբանություն, հեղինակային հրատարակություն, 2010, 456 էջ):

Ընտանեկան դաստիարակության քառսային ոճը միասնական մոտեցման բացակայությունն է, երբ երեխայի նկատմամբ հստակ կոնկրետ, որոշակի պահանջներ չկան և ծնողների միջև տարաձայնություններ են առաջանում դաստիարակչական միջոցների ընտրության վերաբերյալ (Антонов А.И. Социология семьи. Под ред. А.И.Антонова. М., МГУ, 2005, с. 47.): Ծնողական արձագանքի անկանխատեսելիութ-

յունը երեխային զրկում է կայունության զգացողությունից և առաջացնում է բարձր անհանգստություն, անվստահություն, իմպուլսիվություն, նևրոտիկ, աֆեկտիվ բռնկումներ, ագրեսիվություն և անկառավարելիություն, հակասոցիալական վարքագիծ: Նման դաստիարակությամբ չի ձևավորվում ինքնատիրապետում և պատասխանատվության զգացում, դեռահասը տարբերվում է մակերեսային, անհասուն դատողություններով, ցածր ինքնագնահատականով: Նման դեռահասների մասին դպրոցում ասում են, որ նրանք անկառավարելի են: Նրանց համար շատ դժվար է ադապտացվել սոցիումի կյանքում, քանի որ գնահատականներում և վարքագծում նրանք հստակ, կոնկրետ կողմնորոշիչներ չունեն:

Խնամող ոճ (գերխնամք) – ծնողները ցանկանում են մշտապես գտնվել երեխայի կողքին, նրա համար լուծել բոլոր ծագող խնդիրները, ապրել նրա փոխարեն, զրկել նրան ինքնուրույնությունից ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման մեջ [16, էջ 19]: Ծնողները չափազանց շատ են հետևում երեխայի վարքագծին, անհանգստանում, հոգում և խնամում, ինչով արգելակում են երեխայի նախաձեռնության դրսևորմանը, կամքի և ազատության ձևավորմանը, զրկում ինքնուրույնությունից, դաստիարակում հնազանդություն, անկամություն, անօգնականություն: Դաստիարակության խնամակալական ոճը մի կողմից հանգեցնում է դեռահասների մոտ սեփական նշանակությունը չափազանց մեծացնելու, մյուս կողմից՝ նրա մոտ տագնապի, անօգնականության, մանկամտության, լկտիության, ինքնավստահության ձևավորմանը, դեռահասը դառնում է նյարդային, վատ է կողմնորոշվում սոցիալական ոլորտում: Երեխաները մեծանում են հնազանդ, բայց իրենց հնարավորությունների ու ուժերի վրա անինքնավստահ, վախենում են սխալվել, ինչ-որ բան սխալ անել: Որոշ դեռահասներ ձգտում են դուրս գալ ծնողների չափից ավել վերահսկողությունից և խնամքից, ագրեսիա են ցուցաբերում, դառնում են անհնազանդ և ինքնակամ: Դժվարություններ են առաջանում հասակակիցների հետ փոխհարաբերություններում: Գերխնամքը, վերահսկողությունը, սահմանափակումները և արգելքները ձևավորում են անչափահասի գաղտնապահությունը, խորամանկելու, խաբելու ունակությունը: Նման դեռահասները կախված են ուրիշից, ինչպես նաև հեշտ են ընկնում ուրիշների բացասական ազդեցության տակ: Դեռահասները ինքնապաշտպանության համար

սկսում են ստել ծնողներին, ովքեր անընդհատ փորձում են վերահսկել իրենց, ինչը հանգեցնում է օտարման: Ծնողները փաստորեն անգիտակցաբար արգելակում են երեխայի մոտ տարբեր հմտությունների և ունակությունների ձևավորումը, նպատակին հասնելու հաստատակամության զարգացումը, աշխատասիրությունը:

Դաստիարակության **օտարված (ինդիֆերենտ)** ոճը ենթադրում է ծնողների կողմից անտարբերություն երեխայի անձի նկատմամբ (Добрович А. Б. Воспитателю о психологии и психогигиене общения. М.: Просве-щение. 1987 г. - 207 с.): Ծնողները «չեն նկատում» երեխային, չեն հետաքրքրվում նրա զարգացմամբ և ներքին աշխարհով, չեն հետաքրքրվում դպրոցում անչափահասի գործերով, նրա անձնական կյանքով: Ակտիվորեն խուսափում են շփվել նրա հետ, պահում են նրան հեռավորության վրա, բացակայում է ջերմությունը երեխայի նկատմամբ, վերաբերվում են քամահրանքով, անտեսելով նրա հուզական կարիքները: Երեխաները թողնվում են իրենք իրենց: Այս ոճը հանդիպում է անբարեհաջող ընտանիքներում, որտեղ ծնողներն անտարբեր են և անհաղորդ իրենց երեխայի հանդեպ, որտեղ մեկ կամ երկու ծնողները չարաշահում են ալկոհոլը կամ թմրանյութերը: Նման վերաբերմունքը դեռահասին դարձնում է դժբախտ, անինքնավստահ, միայնակ, փակ, նրա մոտ ձևավորվում է ագրեսիվություն, ուրիշների հանդեպ անվստահություն, զգացմունքային օտարվածություն, անհանգըստություն: Դեռահասները դառնում են կամ անպատասխանատու և անինքնավստահ, կամ հակառակ՝ անկառավարելի և իմպուլսիվ: Նրանք խուսափում են շփումից, չեն ձգտում հաստատել սոցիալական կապեր: Վտանգ կա դեռահասներին հակասոցիալական խմբերի մեջ ներգրավվելու: Նման դեռահասները մյուսներից ավելի հաճախ խնդիրներ են ունենում օրենքի հետ:

Դաստիարակության ոճերն ընտանիքում միշտ չէ, որ կարող են դրսևորվել մաքուր ձևով: Ծնողները տարբեր իրավիճակներում օգտագործում են տարբեր ոճեր: Ոճը փոփոխելը, անհետևողականությունը անբարենպաստ ազդեցություն է ունենում երեխայի վրա: Ընտանիքում անհրաժեշտ է սահմանել դաստիարակության երեխային հասկանալի, միասնական ոճ, հաշվի առնելով նրա կարիքները, պահանջմունքները և հնարավորությունները: Ընտանեկան դաստիարակության ոճն արտացոլում է ոչ

միայն ծնողական անձնային առանձնահատկությունները, նրանց դիրքերը, այլև երեխայի ձևավորվող ինքնությունը: Ընտանիքում ընտանեկան դաստիարակության ոճից է կախված երեխայի զարգացումը, նրա բնավորության այս կամ այն հատկանիշի ձևավորումը, վարքագծային մոդելները, ծնողների և մյուսների հետ փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Ընտանիքում և դաստիարակության մեջ ցանկացած աններդաշնակություն հանգեցնում է բացասական հետևանքների, վարքագծային խնդիրների: Անհնար է պատկերացնել որպես անձ մարդու գոյությունն առանց հասարակության: Շփումը մարդու սոցիալական կենսակերպի, գոյության էական պայմանն է: Սոցիալական փորձը և գործելակերպը վկայում են այն մասին, որ անձի լիակատար մեկուսացումը հասարակությունից, այլ մարդկանց հետ շփումից զրկելը հանգեցնում է մարդու սոցիալական հատկանիշների և հատկությունների կորստի: Ներկայումս նկատվում է դարերի ընթացքում ստեղծված, կայացած ընտանեկան արժեքների ոչնչացում: Դեռահասի ինքնագիտակցությունը ձևավորվում է առաջին հերթին ընտանեկան համակարգի ազդեցության ներքո: Եվ ընտանեկան դաստիարակության սխալները նշանակալի ազդեցություն ունեն անչափահասների վարքագծի հակաօրինական ձևերի զարգացման վրա:

Գործնական համատեքստ

Ուզում եմ ներկայացնել սովորողի ընտանիքի, ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ իմ և մեր մանկավարժական կոլեկտիվի ուսուցիչների, մասնագետների համագործակցության եղանակները: Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների, դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Դպրոցի և ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են: Միաժամանակ կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այդպիսի հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, փոխներգործության կայացման առումով էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճը: Դպրոցի և ընտանիքի համագործակցության և փոխներգործության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն այսօր երեխաների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համար համար խորհրդատվությունների կազմակերպումն է:

Մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանեկան կյանքի կարևոր հարցերից մեկն էլ երեխաների ճիշտ դաստիարակությունն է: Ծնողների սերը երեխայի զարգացման անհրաժեշտ կարևորագույն պայմանն է: Երբ երեխան իրեն մենակ ու լքված է զգում, ապա նրա մեջ չի կարող զարգանալ ինքնավստահություն ու հավատ: Ծնողները պետք է իմանան, որ երեխան, որը կյանքի առաջին տարիներին իսկական ջերմության վայելքը չի ապրել, ինքն էլ լիարժեք ծնող դառնալ չի կարող: Մարդը ուրիշներին

սիրել սովորում է իր ծնողներից: Ծնողներն ու ընտանիքի մյուս անդամներն գտնվում են երեխայի ուշադրության կենտրոնում: Հետևաբար՝ երեխայի դաստիարակության ընթացքում պետք է ուշադիր լինել:

Ծնողները պիտի ապահովեն երեխաների մտավոր, անձնային և հուզական զարգացում: Հարկավոր է նրանց հաղորդել հիմնական գիտելիքներ՝ աշխարհի և մարդկային հարաբերությունների, բարոյական արժեքների և նորմի վերաբերյալ: Երկու համերաշխ ծնողների ներկայությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում խնդիրների լուծման համար: Միասին գործելով՝ նրանք միմյանց հնարավորություն են տալիս աշխատել, զբաղվել ինքնակրթությամբ, մասնակցել հասարակական կյանքին: Այս ամենի համար հարկավոր է կարողանալ ճիշտ ընտրություն կատարել: Ընտանիքի հետ աշխատանքն անհրաժեշտ է կառուցել տարբերակված, չպարտադրել փոխներգործության միատեսակ ձևեր, այլ կողմնորոշվել դեպի ծնողների պահանջմունքները, ընտանիքի և ընտանեկան դաստիարակության յուրահատկությունները, ծնողներին աստիճանաբար ներգրավել դպրոցի, դասարանի և իր երեխայի գործերում: Իսկ դպրոցի և ծնողների համագործակցությունը շատ կարևոր է: Ծնողները պատրաստ են քննարկել բոլոր այն հարցերը, որոնք շոշափում են երեխաների հետաքրքրությունները: Դասղեկը մշակում է ծնողներին փոխանցվող հոգեբանամանկավարժական գիտելիքների համալիր, որը ենթադրում է ծնողների գործուն, ստեղծագործական մասնակցություն՝ հարցերի քննարկմանը, ուսումնական պարապմունքների կազմակերպման և անցկացման գործընթացներին: Ուսուցիչների և ծնողների փոխներգործության ակտիվ մեթոդներ կարող են լինել փորձի փոխանակման, հարց ու պատասխանի երեկոները, բանավեճերը, ուսուցիչների և մասնագետների (բժիշկներ, հոգեբաններ և այլն) հետ հանդիպումները:

Ուսուցիչների, դասղեկների կարևորագույն խնդիրներից են ընտանիքի միասնության ու համախմբվածության նախադրյալների ստեղծումը, ծնողներիև երեխաների փոխըմբռնման մթնոլորտի, ընտանիքում երեխաների համար հարմարավետ միջավայրի նախապատրաստումը, նրանց համատեղ գործունեության և շփման հմտությունների ձևավորումը: Ուսուցիչն իրականացնում է նպատակասլաց գործունեություն երեխաների և ծնողների միջև ներդաշնակ հարաբերությունների

ձևավորման ուղղությամբ, ստեղծում ծնողների կամ օրինական ներկայացուցիչների նկատմամբ հարգալից վերաբերմունքի մշակման իրավիճակներ: Ծնողների հետ համագործակցությունը դպրոցի կրթական նպատակների իրականացման և երեխաների կրթության առավել նպաստավոր պայմանների ու կրթական միջավայրի ստեղծման կարևոր նախադրյալ է: Ծնողների խորհրդատվությունն այսօր դպրոցի ու ընտանիքի համագործակցության ամենաարդիական և պահանջված ուղղությունն է: Ծնողների մեծամասնությունը ինքնակրթության համար ժամանակ չի ունենում: Սովորաբար խորհրդատվության համար դիմում են դպրոցին: Որպես կանոն, դա լինում է հատկապես ծայրահեղ իրավիճակներում՝ երեխայի վատ առաջադիմության կամ վարքի դրսևորման ժամանակ: Անհրաժեշտ է պահպանել փոխվստահության, փոխադարձ հարգանքի, խորհրդատվության նկատմամբ հետաքրքրությունների, կոմպետենտության, ծնողների միջավայրում խնդիրներն ինքնուրույն լուծելու դիրքորոշումների մշակման, խորհրդատվությունների որակի ապահովման սկզբունքները: Գաղտնիք չէ, որ երեխաների ծնողները զբաղված մարդիկ են: Ուստի խիստ կարևոր է, որ խորհրդատվությունը կազմակերպվի նաև ծնողներին հարմար ժամերի, որպեսզի հնարավորություն ունենան միաժամանակ այլ խնդիրներ լուծել: Դպրոցում պետք է լինի հանդուրժողականության և հյուրընկալ ջերմ մթնոլորտ, քանի որ դպրոցի ու ծնողի համագործակցությունն սկսվում է դպրոցի նախասրահից:

Ընտանիքում երեխաները նույնպես ունեն իրենց պարտականությունները և պատասխանատվությունը: Ուսուցիչ-ծնող փոխհարաբերությունները նպաստում են անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը և անհատի արժեքային համակարգի ձևավորմանը: Հենց առաջին օրերից ամուր հիմքի վրա պետք է լինի ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը. իրապես հարգելով և վստահելով ուսուցչին՝ ծնողը երեխայի մեջ հարգանք պիտի սերմանի դպրոցի ու կրթության նկատմամբ: Դժվարին և կարևոր պատասխանատվություն է կրում ուսուցչը: Նա իր ժողովրդի այն զինվորն է, որի զենքը գիտությունն է: Նա տիրապետում է մարդ դաստիարակելու արվեստին: Իր գործին նվիրված ուսուցչի ամբողջ կյանքն անցնում է սերունդներին կրթելու և դաստիարակելու նորանոր ուղիների որոնման մեջ:

Ամփոփում

Այսպիսով, ուսուցչի պարտքն է՝ ճանաչել ու հասկանալ երեխաների ֆիզիկական և հոգեբանական վիճակները, պաշտպանել նրանց՝ դպրոցական կյանքի բոլոր իրավիճակներում: Այս գործոնները երեխաներին կհաղորդեն պաշտպանվածության զգացում և ինքնավստահություն, կստեղծեն ստեղծագործնական ակտիվություն ու լիարժեք զարգացում: Մանկավարժության նվաճումը առկա հիմնախնդիրների գործնական լուծումների իրագործման արդյունավետ փորձերն են: Դաստիարակչական ներգործությունը պետք է ուղեկցվի ընտանեկան դաստիարակության սերտ համագործակցությամբ: Հակառակ դեպքում դրական արդյունք չենք կարող տալ: Դպրոցում դաստիարակությունն ընթանում է մի շարք ուղղություններով՝ ուսուցում, գնահատում և հասակակիցների հետ փոխադարձ շփումների կարգավորում:

Դպրոցական ուսուցումը նպաստում է այնպիսի որակների ձևավորմանը, ինչպիսիք են հետաքրքրասիրությունը, ուշադրությունը, պահանջկոտությունը և բնավորության մի շարք այլ գծեր: Դաստիարակչական աշխատանքը հիմնականում նպաստում է երեխայի ճանաչողական հետաքրքրությունների, ինքնակրթության, ինքնազարգացման պահանջմունքների ձևավորմանը: Դպրոցի մանկավարժական մեթոդների հիմքում ընկած են երեխայի ազատ մտածողության, վերլուծական, ստեղծագործական մտածողության, տրամաբանության, ինչպես նաև կողմնորոշվելու ունակության զարացումը: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է, որի նպատակով ուսուցիչը և դպրոցը համագործակցում են ծնողի կամ երեխայի օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության և ընտանեկան դաստիարակության հարցերով:

Ժամանակի մեծ մտավորականներից մեկն ասել է. «Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա. նա ձևավորում է մարդուն»:

Գրականություն

2. Սեդրակյան Ս. Ընտանիքի հոգեբանություն, հեղինակային հրատարակություն, 2010, 456 էջ:

3. Алексеева Л.С., Плотник М.М., Спиваковская А.С., Ширинский В.И. Влияние внутрисемейных отношений на формирование личности ребенка. – Вып. 1. – М.: ЦБКТИ Минсоцзащиты населения Российской Федерации, 1995. – 40 с.

4. Антонов А.И. Социология семьи. Под ред. А.И.Антонова. М., МГУ, 2005, с. 47.

5. Антропов Ю.Ф. Психосоматические расстройства и патологические привычные действия у детей и подростков / Ю.Ф.Антропов, Ю.С.Шевченко. – М.: Издательство Института Психотерапии, Издательство НГМА, 2001. - 320 с.

6. Добрович А. Б. Воспитателю о психологии и психогигиене общения. М.: Просвещение. 1987 г. - 207 с.

7. Кузьмишина Т.Л., Амелина Е.С., Пермякова А.А., Хохлова Е.А. Стили семейного воспитания: отечественная и зарубежная классификация / Т.Л.Кузьмишина. – М., 2014. – С. 16 - 25.

8. Педагогическая психология: учеб. для студ. высш. учеб. заведений / Под ред. Н.В. Клюевой. – М.: из-во ВЛАДОС-ПРЕСС, 2003. – 400 с.

9. Шнейдер Л.Б. Семейная психология: учебное пособие для вузов / Л.Б.Шнейдер - Изд. 2-е. М.: Академический Проспект; Екатеринбург: Деловая книга, 2006, - 768 с.